



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրությունը ծածկում է ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ-ից արտահանում իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվող արտահանման կարճաժամկետ վարկերի չվերադարձման ռիսկերը:

Նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության օգնությամբ արտահանում իրականացնող տնտեսվարողները հնարավորություն են ունենում արտադրության փուլում ստանալ **ԱՆԳՐԱՎ** և **ՄԱՏՉԵԼԻ** ֆինանսավորում, որը կարող է օգտագործվել հետևյալ նպատակներով.

- Հումքի, նյութերի ձեռքբերում
- Արտադրանքի փաթեթավորում և շուկայական տեսքի բերում
- Տրանսպորտային և մաքսային ծախսերի կատարում


## ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Վարկի առավելագույն ժամկետ՝ **1** տարի
- Ֆինանսավորման նվազագույն տարեկան տոկոսադրույք՝ **4,5%**
- Ապահովագրական սակագին՝ **0.3%-2.7%\***
- Ապահովման միջոցներ՝ վարկառուի գործադիր մարմնի ղեկավարի և նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի անձնական երաշխավորություններ

\* Ապահովագրական սակագինը հաշվարկվում է ապահովագրական գումարի նկատմամբ և որոշվում է՝ հիմք ընդունելով արտահանողի և օտարերկրյա գնորդի ֆինանսական վիճակը, արտահանողի և օտարերկրյա գնորդի համագործակցության պատմությունը, օտարերկրյա գնորդի երկրի ռիսկայնության դասը և այլն:

# ՆԱԽԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՆՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության (ՀԱԱԳ) կողմից տրամադրվող նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրությունը հնարավորություն է ընձեռում արտահանում իրականացնող տնտեսվարողներին ապրանքների արտադրության փուլում ֆինանսական կազմակերպություններից ստանալ շրջանառու կապիտալի համալրմանն ուղղված կարճաժամկետ ֆինանսավորում, ինչը նպաստում է արտադրական պրոցեսի անընդհատության ապահովմանը և արտահանման ծավալների ավելացմանը:



Ֆինանսավորման կարիք ունեցող արտահանող կազմակերպությունները ՀԱԱԳ են ներկայացնում ապահովագրության դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց հիման վրա ՀԱԱԳ մասնագետներն իրականացնում են գործարքի վերլուծություն:

Գործարքի վերաբերյալ ՀԱԱԳ-ի կողմից դրական որոշում կայացնելու դեպքում, արտահանողին տրամադրվում է ապահովագրության առաջարկ, որն իր մեջ ներառում է ապահովագրական սահմանաչափը և ապահովագրության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ պայմանները:

ՀԱԱԳ-ի կողմից տրամադրված առաջարկի հիման վրա արտահանում իրականացնող տնտեսվարող սուբյեկտը դիմում է իր համար նախընտրելի ֆինանսական կազմակերպությանը:

Վարկ տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում ֆինանսական կազմակերպությունը արտահանողի հետ կնքում է վարկային պայմանագիր, իսկ ՀԱԱԳ-ի հետ՝ նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության պայմանագիր, ինչը հանդիսանում է վարկային պայմանագրի ապահովման միջոց:

**ԳՈՐԾԸՆԿԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ**



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ


## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ը հիմնադրվել է ՀՀ Կառավարության որոշմամբ 2013 թվականին՝ արտահանման խթանման նպատակով: Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է:


ՀԱԱԳ-ի կողմից ստանձնած ապահովագրական ռիսկերի **90%**-ը վերաապահովագրված է հեղինակավոր **Swiss Reinsurance Company Ltd.** կազմակերպության կողմից, որն արժանացել է Standard & Poor's AA- և Moody's Aa3 վարկանիշների:

### ՀԱԱԳ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Կնքված պայմանագրերի քանակ



Ապահովագրական գումար



Հաստատված ապահովագրական սահմանաչափեր



2017թ.-ին ՀԱԱԳ-ի կողմից տրամադրված ապահովագրական հատուցումը կազմում է շուրջ 240 մլն ՀՀ դրամ

Ապահովագրական պատահար չհամարվող դեպքերը կամ ռիսկերը, ապահովագրական հատուցում ստանալու կարգը և գործընթացը, ապահովագրողի կողմից ապահովագրավճարը չվճարելու հետևանքները, ապահովագրողի իրավունքները և պարտավորությունները, ապահովագրության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ապահովագրության պայմանագրի վերակնքման, վերաձևակերպման կարգն ու պայմանները, ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման և լուծման դեպքերն ու պայմանները նկարագրված են ՀԱԱԳ ԱՓԲԸ պաշտոնական վեբ կայքում՝ [www.eia.am](http://www.eia.am)

# ՆԱԽԱՐՏԱՆՄԱՆ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48/1  
«Սախարով» բիզնես կենտրոն, 3-րդ հարկ  
ՀՀ ԿԲ լիցենզիա՝ ԱՊՈ 0011

Հեռ.՝ +374 10 58 29 29  
+374 11 58 29 29

[info@eia.am](mailto:info@eia.am) | [www.eia.am](http://www.eia.am)

